Արձանագրություն N 4

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար «Գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/3-05» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «13» ապրիլի 2016թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Կարեն Համբարձումյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝

Աղավնի Բուդուլյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Կարեն Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Անահիտ Ավագյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Արման Ղուկասյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

1. **Տեղեկատվություն՝ ներկայացրած հայտերում արձանագրված անհամապատասխանությունները մասնակիցների կողմից շտկելու վերաբերյալ.**

«Լիգա Պլյուս» ՍՊԸ-ն, «ՇՈՒՇԱՆ ՏԵԽՆԻԿՍ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել են հայտերում արձանագրված անհամապատասխանությունները: Ղեկավարվելով Կարգի 46-րդ կետով՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. **Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.**

Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

<u>1-ին և 4-րդ</u> չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՍԱՔԻ» ՍՊԸ-ին:

<u>5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ</u> չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ին:

1-ին չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Լիգա Պլյուս» ՍՊԸ-ին:

7-րդ և 12-րդ չափաբաժինների մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Վահրամ Հակոբյան» Ա/Ձ-ին:

4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով մյուս մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2-րդ չափաբաժնի մասով մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները («ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ի և «ՍԱՔԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկներում ինքնարժեքների և ինքնարժեքների նկատմամբ հաշվարկվող ԱԱՀ-ի հանրագումարները, «Լիգա Պլյուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում ինքնարժեքը ևս գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները), իսկ 3-րդ չափաբաժնի մասով գնային առաջարկ ներկայացրած միակ մասնակցի հայտը մերժվել է՝ հանձնաժողովը որոշեց ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն (պայմանագիր չի կնքվում), 3-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետով՝ նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը

1) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել համապատասխան հարցումը,

2) ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016թ. ապրիլի 19-ը ներառյալ ներկայացնել Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի <<զ>> պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը:

3) ծանուցել 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ չափաբաժինների մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016թ. ապրիլի 19-ը ներառյալ ներկայացնել լրացուցիչ հիմնավորում չհիմնավորված ցածր գնային առաջարկներ ներկայացնելու համար. մասնակցի ներկայացրած գները ցածր են գնման հայտով նախատեսված առավելագույն գների 75 տոկոսից:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Հանձնաժողովը որոշեց.

-հաստատել «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/3-05» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը 2-րդ և 3-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը /կցվում է/:

- Ղեկավարվելով Կարգի 49-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2016թ. ապրիլի 21-ին, ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ Կարեն Համբարձումյան

Անդամներ՝ Աղավնի Բուդուլյան

Կարեն Մելքոնյան

Անահիտ Ավագյան

Քարտուղար՝ Արման Ղուկասյան

Արուս Խաչատրյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ <<ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/3-05>> ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ 2-ՐԴ, 3-ՐԴ ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2016 թվականի ապրիլի 13-ի թիվ 4 որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/3-05

Պատվիրատուն՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, որը գտնվում է ք.Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/3-05» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին համառոտ տեղեկատվությունը:

Չափաբաժին	**Գնման առարկայի համառոտ նկարագրություն**	**Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝այդպիսիք լինելու դեպքում**	**Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն՝"Գնումների մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի** /ընդգծել համապատասխան տողը/	**Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն**
2	Դրոշներ	«ՍԱՔԻ» ՍՊԸ «Լիգա Պլյուս» ՍՊԸ «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ	1-ին կետի 2-րդ կետի 3-րդ կետի 4-րդ կետի	պայմանագիր չի կնքվում
3	ՀՀ զինանշան	«ՓԵՆ ԲՈՔՍ» ՍՊԸ	1-ին կետի 2-րդ կետի 3-րդ կետի 4-րդ կետի	հայտը չի համապատասխանում հրավերի պայմաններին

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ա. Խաչատրյանին:

Հեռախոս՝ 010-511-787:

Էլ. փոստ՝ datgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ **«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ**